ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 28 հուլիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Արմեն Խառատյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Արմեն Խառատյանը 20. 07. 2011թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին հակասող և անվավեր ճանաչել «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ ենթակետի դրույթները կամ հակասող և անվավեր ճանաչել՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին,

19-րդ հոդվածին /1-ին մաս/, 94, 97-րդ հոդվածներին՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում»:

Դիմողը պնդում է, որ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքով դատական իշխանությունում պետական ծառայության տարրեր ամրագրելով՝ օրենսդիրը միաժամանակ պետք է այդ իրավակարգավորումներով չխախտեր դատավորի անկախության երաշխիքները, քանի որ դատական համակարգն իշխանության ինքնուրույն ճյուղ է: Ելնելով այս հիմնարար մոտեցումից՝ օրենսդիրը պետք է տարանջատեր «դատավորին կցված» և «դատավորին չկցված» հասկացությունները և առաջինի տակ ընկնող պետական ծառայողներին աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու հարցերում թույլատրեր դատավորի միջամտությունը, որը պետք է նպատակ հետապնդեր ապահովել, որպեսզի դատավորն իր սեփական հայեցողությամբ իր ռեսուրսները կարգավորելու որոշակի ազատություն ունենա: Հաշվի առնելով, որ դատավորի օգնականի գործատուն համարվում է դատական դեպարտամենտը, օրենսդիրը դատական ծառայողների որոշակի խմբի նկատմամբ դրսևորել է տարբերակված մոտեցում, որի նպատակը պետք է լիներ փոխհավասարակշռել դատական դեպարտամենտի գործառույթները դատավորի գործառույթների և լիազորությունների շրջանակի հետ:

Դիմողը նաև գտնում է, որ եթե անգամ օրենսդիրը խնդրո առարկա դրույթներով նպատակ է հետապնդել այնպիսի իրավակարգավորումներ տալ, որոնք կապահովեն դատավորի ներքին անկախության և ինքնուրույնության երաշխիքները, այդ դրույթները չեն ձևակերպվել բավարար հստակությամբ, որպեսզի հենց այդպես էլ ընկալվեն:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ դիմումը ենթակա է ընդունման, քանի որ՝

-դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,

- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, 31-րդ, 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Արմեն Խառատյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության՝ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ ենթակետի դրույթների սահմանադրականության հարցը որոշելու առումով:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

28 հուլիսի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/1-19